ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Հայրապետ Անդրեասյանը, Արմեն Առաքելյանը, Մարինե Առաքելյանը, Արմինե Կիրակոսյանը, Լուսինե Ղազարյանը, Ալինա Մակարյանը, Աննա Մանուկյանը, Նարեկ Մարտիրոսյանը, Հակոբ Մելքոնյանը, Սարիբեկ Մկրտչյանը, Կարեն Պետրոսյանը, Արմինե Պողոսյանը, Սևան Սեփխանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանը

Նիստն արձանագրում էր ՝ Աննա Թադեվոսյանը

Լսեցին

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 1)*

Լսեցին

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերով, ամփոփելով և հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 17-ին կայացած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքները.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար ընտրված համալրել <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության կողմից համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրված Ղազար Ղազարյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 2)

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 44 որոշումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարին՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ստանձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի լիազորությունները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 3)*

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանը գումարել 2022 թվականի փոտրվարի 8-ից մինչև հունիսի 29-ը: 2022 թվականի առաջին նստաշրջանի գումարման օր սահմանել 2022 թվականի փետրվարի 8-ը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 4)*

Ավագանու անդամներ

ԱՐԱՅԻԿ ԱԲԱՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԱԿԱՐՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Թադեվոսյանը

_____